ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը տեղեկացնում է, որ սույն թվականի հունիսի 29-ին Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակութային կենտրոնի տնօրեն տիար Ռեզա Աթուֆիի հրավերով և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանն այցելեց Իրանի դեսպանատան մշակութային կենտրոն, ուր հանդիպում ունեցավ տիար Ռեզա Աթուֆիի հետ:

Հանդիպման նպատակը Հայ Առաքելական Եկեղեցու և Իրանի Իսլամական Հանրապետության միջև միջկրոնական երկխոսություններ սկսելն էր: Քննարկվեցին մի շարք հարցեր փոխշահավետ համագործակցության վերաբերյալ և որոշվեց, որ առաջիկայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում անցկացվի Միջկրոնական գիտաժողով-հավաք՝ «Կրոնը և բանականությունը ներկայիս փոփոխվող աշխարհում» թեմայով: Որոշվեց նաև, որ այն պետք է կրի շարունակական բնույթ: Երկխոսությունները պետք է տեղի ունենան թե՛ Հայաստանում և թե՛ Իրանում:

Առաջիկայում նախատեսվում է ևս մեկ հանդիպում, որից հետո կսկսվեն նախապատրաստական աշխատանքները:

Հանդիպմանը ներկա էին նաև մշակութային կենտրոնի աշխատակիցները: Սրբազան Հորը ուղեկցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ